ԿԱՐԾԻՔ

Նաիրի Արծրունի Սարգսյանի՝ «Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Նաիրի Արծրունի Սարգսյանի «Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսության թեման արդիական է, նվիրված է Հայաստանում ֆինանսական վերահսկողության սահմանադրական և վարչաիրավական ասպեկտների հետազոտությունը, որոնք ներկայումս՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում էական նշանակություն են ձեռք բերել կառավարման համակարգի արմատական բարեփոխման տեսանկյունից:

ՀՀ տնտեսության ներկա ամենամեծ խնդիրներից մեկը՝ շուկայական հարաբերություններին հատուկ ֆինանսական վերահսկողության համակարգի ձևավորումն է, որի կայունությամբ և պետական վերահսկողության գործունեության արդյունավետության աստիճանով է պայմանավորված ՀՀ տնտեսական ինքնիշխանությունը և անվտանգությունը:

Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորումն իրավագիտության կարևոր հիմնախնդիրներից է, որի գիտական վերլուծությունը, օրենսդրական կարգավորման սահմանների, ծավալների, գործառույթների և գործառնությունների հստակեցումը կնպաստեն ճիշտ հասկանալ և գնահատել ֆինանսական վերահսկողության համակարգի էությունը, դերը և նշանակությունը հասարակության տնտեսական և պետական անվտանգության ապահովման գործում: Հիշատակված հարցադրումները վկայում են ֆինանսական վերահսկողության գործունեության իրավական կարգավորման արդիականության և լուծումներ որոնելու հրատապության մասին, որոնցով պայմանավորված է «ֆինանսական

վերահսկողության իրավական կարգավորման» հիմնահարցի գիտական ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

Ատենախոսության թեմայի ընտրությունը և դրա արդիականության հիմնախնդիրների համար ատենախոսությունում կատարված գիտական բացահայտումները և վերլուծությունները ինքնին վկայում են, թե օբյեկտիվորեն որքան մեծարժեք է ժամանակակից ֆինանսական իրավունքի տեսության ոլորտում ֆինանսական վերահսկողության և հսկողության իրավական կարգավորումները և վերահսկողությամբ հայտնաբերված իրավախախտների նկատմամբ հարկադրանքի և ֆինանսական պատասխանատվության հիմնախնդիրների նորովի գիտական լուսաբանումները, ինչպես նաև այն նոր ուղիների փնտրտուքը, որը կնպաստի պետության ֆինանսական վերահսկողության, դրա գործնական կիրառման ձևերի և մեթոդների կատարելագործմանը:

Գիտական հետազոտության թեմայի ընտրությունը և ուսումնասիրության հրատապությունը ՀՀ-ում, կապված պետության ֆինանսատնտեսական ինքնիշխանության, տնտեսական բարեփոխումների ապահովման և ֆինանսական համակարգի տարբեր ոլորտների ֆինանսական վերահսկողության և հսկողության ճանապարհով իրավախախտումների բացահայտման և կանխման գործընթացների հետ, օրվա հրամայականն են դարձնում հստակեցնել, տարանջատել և բացահայտել ֆինանսական վերահսկողության, դրա գործնական կիրառման տեսակների, ձևերի և մեթոդների տեղը և դերը ֆինանսական իրավունքի ճյուղի և օրենսդրության համակարգում: Պակաս կարևորություն չեն ներկայացնում նաև ֆինանսական վերահսկողությամբ հայտնաբերված ֆինանսահիրավական խախտումների համար կիրառվող հարկադրանքի, սանկցիաների, դրանց իրավական բնույթի, ինչպես նաև վերջիններիս կիրառման արդյունավետության ուղիների փնտրմանն ուղղված ֆինանսահիրավական գիտական հետազոտությունների պակասը, որոնց պահանջն անհրաժեշտություն է հայրենական ֆինանսական իրավունքի գիտության տեղաշարժի համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը հեղինակին հնարավորություն է ընձեռել կանխորոշել հետազոտման նպատակը, որի բացահայտումների համար

աշխատանքի հեղինակը առաջադրված տաս խնդիրներին տվել է հիմնավոր պատասխաններ (ատենախոսության 10-14 էջ):

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը ֆինանսական իրավունքի գիտության ոլորտում առաջին փորձերից մեկն է, որը ֆինանսական վերահսկողության իրավագիտական հայեցակարգերի պահանջներին համապատասխան ամբողջացվել և գիտահետազոտական միասնական ուսումնասիրությունների լույսի տակ ներկայացվել է ֆինանսական վերահսկողության և հսկողության օբյեկտի առկայությունը, նրա ինքնուրույն գոյության անհրաժեշտությունը, բացահայտելով ֆինանսական վերահսկողության հայեցակարգում այնպիսի նորույթներ, որոնք հատուկ են միայն ֆինանսական իրավունքի ճյուղին:

Ֆինանսական վերահսկողության իրավական հիմնախնդիրների բավարար լուսաբանումները պայմանավորված են ֆինանսական վերահսկողության իրավական ինստիտուտի գոյությունը և կիրառման անհրաժեշտությունը հիմնավորող մի շարք իրավական առանձնահատկություններով, ինչպիսիք են՝ ա) պետական կառավարման ոլորտում ֆինանսական վերահսկողության դրսևորման յուրահատկությունները և նրա փոխհարաբերակցությունը օրենսդիր, դատական իշխանության և հասարակական ֆինանսական վերահսկողության հետ, բ) ֆինանսական վերահսկողության տեսակների, ձևերի և մեթոդների ներգործության արդյունավետությունը ֆինանսական պարտավորությունների կատարման և ֆինանսահրավական հարաբերությունները մասնակիցների շահերի պաշտպանության ընթացքում:

Ատենախոսության նորույթների մի խումբն ուղղված է ՀՀ հանրային ֆինանսների ոլորտի ֆինանսական վերահսկողության նորմատիվ իրավական կարգավորումների հետազոտական-բացահայտումների արդյունքում գործող օրենսդրության կատարելագործման, հայտնագործված բացթողումների և թերությունների վերացման ուղղությամբ ֆինանսական համակարգի առանձին ոլորտները կարգավորող իրավական գործող ակտերի բովանդակության արմատական փոփոխություններին, որոնք վաղուց կորցրել են իրավունքի և իրավական ակտերին հատուկ կարգավորող, նախազգուշական, կանխարգելիչ, պատժիչ գործառույթները, որոնք

իրենց թերություններով հակասում են ժամանակի իրավական հայեցակարգերին, բացասաբար են անդրադառնում ֆինանսատնտեսական բարեփոխումների գործընթացի վրա: Խոսքը վերաբերում է ՀՀ «Բյուջետային համակարգի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Արժութային», «Վերահսկողական», «Հաշվեքննիչ պալատի մասին» և մի շարք այլ իրավական ակտերին, ինչպես նաև գործող ՀՀ «Հարկային օրենսգրքին» (տե՛ս, ատենախոսության 9-10 էջերը):

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է ուսումնասիրության նպատակներով և խնդիրներով, կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք կազմված են յոթ պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված նորմատիվա-իրավական ակտերի և գրականության ցանկից:

Աշխատանքի ընդհանուր ծավալի 189 էջ է:

Ատենախոսության հեղինակը թեմայի ամբողջական վերլուծությունը ապահովելու նպատակով միանգամայն ճիշտ դիրքորոշում է ցուցաբերել, հատկապես առանձին գլուխներով լուսաբանելով վերահսկողություն իրականացնող մարմինների համակարգը, ապա վերահսկողություն այն ձևերի ու մեթոդների առանձնահատկությունները, որոնք հատուկ են վերահսկողության յուրաքանչյուր ձևին:

Աշխատանքում հաջողությամբ լուսաբանված են հատկապես պետական, ֆինանսական հսկողության տեսակները, անդրադարձ է կատարված ՀՀ ԱԺ-ի, կառավարության, դատական, դատախազական մարմինների կողմից իրականացվող ֆինանսական վերահսկողությանը:

Նաիրի Արծրունի Սարգսյանի հեղինակած թեկնածուական ատենախոսությունը ունի տրամաբանական կառուցվածք:

Աշխատանքի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ որոշակիորեն հիմնավորված եզրահանգումներով ներկայացվում են հայաստանյան իրականությունում ֆինանսական վերահսկողության ինտիտուտի որոշ հիմնախնդիրների գործնական լուծումներ: Ատենախոսությունում ներկայացված դատողություններն ու եզրահանգումներն ունեն ճանաչողական, գիտական-գործնական նշանակություն և կարող են օգտակար լինել առանձին հետազոտությունների և ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության հեղինակը լիարժեքորեն օգտագործել է նորմատիվ նյութեր և տեսական-մասնագիտական գրականությունն, ինչի շնորհիվ աշխատանքում ձևակերպված եզրահանգումները և գործնական առաջարկությունները ներկայացրել է գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված: Այնուամենայնիվ, անհրաժեշտ եմ համարում ներկայացնել որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևալին.

1. Հեղինակը Ներքին Աուդիտի մասին ՀՀ օրենքի դրույթների վերլուծությունից բխեցնում է, որ, քանի դեռ հանրային հատվածի կազմակերպություններում նեքին աուդիտորը աշխատանքի է նշանակվում կազմակերպության ղեկավարի կողմից և աշխատում է նրա ուղիղ ենթակայության տակ, կասկածի տակ է դրվում աուդիտորի գործունեության անկախությունը և օբյեկտիվությունը, ինչի արդյունքում հանգել է այն եզրակացության, որ անհրաժեշտ է վերանայել այդ մոտեցումը և ներքին աուդիտորին աշխատանքի նշանակման և ղեկավարման լիազորությունը վերապահել այլ անձանց(էջեր 13, 159 – 161):

Կարծում ենք՝ այս փաստարկը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Այսպես, եթե հեղինակի կարծիքը կարելի է ընդունելի համարել հանրային հատվածի կազմակերպության վարձու աշխատակից համարվող աուդիտորի պարագայում, նույնը չենք կարող միանշանակորեն պնդել աուդիտորական ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից ներքին աուդիտի ծառայությունների պատվիրակման պարագայում:

2. Ատենախոսության 3-րդ գլխի 1-ին պարագրաֆում ՀՀ ԱԺ Քննիչ հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համատեքստում հեղինակը կատարել է հետևյալ եզրահանգումը, որ ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովների գործունեությունն ավելի շատ տեղեկատվական բնույթ ունի, և առաջարկել է ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով, վերջիններիս վերապահել ավելի լայն վերահսկողական լիազորություններ, ինչի արդյունքում հանձնաժողովների գործունեությունը կհանգեցնի շոշափելի արդյունքների, ինչն էլ իր հերթին կնպաստի ֆինանսական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը (էջեր 98-100):

Անհրաժեշտ է նկատել, որ այս եզրահանգումը ինքնին վիճահարույց չէ, սակայն կարծում ենք, որ այս արձանագրման վերաբերյալ անհրաժեշտ են լրացուցիչ հստակեցումներ հետազոտության առարկա խնդրի համատեքստում, հակառակ դեպքում դրանք կարող են կրել հայտարարությունների բնույթ:

3. Ատենախոսության մեջ հիմնականում հետազոտության առարկա են դարձել ՀՀ ֆինանսական վերահսկողության մարմինների գործունեությունները: Թեև հեղինակը պարբերաբար համեմատականներ է անցկացրել տարբեր երկրների ֆինասական վերահսկողություն իրականացնող մարմինների հետ, այնուամենայնիվ ներկայացված եզրահանգումների և առաջարկությունների վերաբերյալ չի վկայակոչել որևէ երկրում այդ առաջարկությունների հաջող փորձարկման օրինակներ, ինչը կարծում ենք առավել շահեկան կլիներ ատենախոսության համար:

4. Մեր կողմից ներկայացված նկատառումների կողքին, ատենախոսության մեջ թույլ են տրվել նաև մի շարք տեխնիկական վրիպումներ՝ կետադրական նշանների, շարահյուսության տեսքով, որոնք ընդհանուր առմամբ կրում են մասնակի բնույթ և չեն կարող ազդել աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա:

Ատենախոսությունում տեղ գտած թերությունների, բացթողումների կապակցությամբ իմ նկատառումները էական չեն: Որևէ բացասական ազդեցություն չունեն, չեն նսեմացնում գիտական հետազոտության արժեքները:

Հեղինակը դրսևորել է թեմային առնչվող հիմնախնդիրները առանձնացնելու, դրանց հետազոտության արդյունքներով ինքնուրույն գիտական եզրահանգումներ առաջադրելու բարձր ունակություններ: Ուսումնասիրել է բազմաքանակ տեսական աղբյուրներ, նորմատիվ ակտեր, վերլուծել է ֆինանսական վերահսկողության որոշ հատվածներ, իրազեկված է իր կողմից ընտրված թեմային առնչվող հարցադրումների իրավական հիմքերից:

Ատենախոսությունը գանահատում եմ ընդունելի ոճով կատարված աշխատանք:

Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում և մենագիր աշխատությունում լիարժեքորեն արտահայտված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսությունն ամբողջական գիտական արժեք ներկայացնող հետազոտություն է, որի թեման և բովանդակությունը համապատասխանում են ՀՀ «գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԲ.00.02.- «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամ

Երանուհի Թումանյանց

«18» հոկտեմբերի 2022թ.

Երանուհի Թումանյանցի ստորագրությունը հաստատում եմ

Հինգերորդի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Հերիքնազ Ցուրցյան

ԱՆՁՆԱԳՐԻՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«18» հոկտեմբերի 2022թ.